Ջուրն էլավ երես-երես

Ջուրն էլավ երես-երես, լե, լե,
Լէ, լե, լե, լե, լե, լե, լե, Լեյլա ջան,
Բազրգան, Աստված սիրես,
Թոթվե միզարեդ, յար ջան։

Բաշ Աբարան էրթալուց,
Իմ յարին հետ կըբերես։

Ջուրն էլավ լափին-լափին, լե, լե,
Լէ, լե, լե, լե, լե, լե, լե, Լեյլա ջան,
Թափավ վըր էն քարափին,
Թոթվե միզարեդ, յար ջան։

Ղուրբան էղնիմ իմ յարին,
Համ դուր կըգյա, համ դարդի։

Սև եմ սևավոր հավք եմ
Դեղին թևավոր հավք եմ
Ինձ բաց թողեք որ թռչեմ
Երամի սովոր հավք եմ։

Դեղին քուռակ մըջ խամին
Ոտս դրի վըր գյամին
Ըսեր եմ կառնեմ քեզի
Տեսնանք ինչ կասի ամին։

Թոնրատան առանձին ենթաբաժինները մեծ մասամբ հազարաշեն կոչվող ծածկ էին ունենում: Վերջինս հողով ծածկելիս գմբեթի ձև էր ստանում: Գմբեթները վերջանում էին երդիկներով, որոնք լուսավորության և ծուխը քաշելու համար էին: Բայց կային նաև գոմի ծածկ ունեցող թոնրատներ, որոնց երդիկներին գմբեթի ձև էին տալիս:
Գլխատունը գրեթե միակ խոհանոցն էր, որտեղ սովորաբար հաց էին թխում և եփում կերակուրներ: Այդ պատճառով էլ բոլոր ամաններն այնտեղ էին պահում: Ընդհանրապես նախ տղամարդիկ, ապա կանայք ճաշում էին

թոնրատանը: Շատ քիչ շրջաններում տղամարդիկ ճաշում էին օդաներում, իսկ կանայք՝ թոնրատանը:
Գլխատունը նաև ննջարան էր: Բացառությամբ նորապսակների, ամբողջ գերդաստանը քնում էր այնտեղ: Անկողինները փռվում էին թոնրի շուրջն այնպես, որ ննջողների ոտքերը թոնրի կողմը լինեին:
Աղբյուրը՝ Բդոյան Վ., <<Հայ ազգագրություն>>
Նկարը՝ Շուշան Համբարձումյանի